Տիրույթ	
Որակի տիրույթ	Հաղորդակցություն, հասարակության հետ կապեր
Կապ Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին	ՈԱԵՁՈ (ESG)չափանիշներ: 2.2, 2.4, 2.6, 3.4, 3.6
Գործողության տարիներ	2021-2025
Հաստատված	ՈԱԱԿ տնօրեն
Տարբերակ	01
Տիրույթի պատասխանատու	Հասարակության հետ կապերի պատասխանատու

<u>Ռազմավարական նպատակները</u>

1. Կրթության ոլորտում որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանն ուղղված միջոցառումների ապահովում, շահակիցների հետ նախաձեռնողական և շարունակական հաղորդակցման և համագործակցության ապահովում:
2. Փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում:
3. Հայրենական և միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում:
4. Մասնակիցների հետ շարունակական հաղորդակցության և ՈԱԱԿ-ի գործունեության թափանցիկության ապահովում:

<u>Թիրախները</u>

1. ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կատարելագործում:
2. Փորձագիտական բազայի ընդլայնում և դիվերսիֆիկացիա՝ ըստ մասնագիտական կրթական ոլորտների:
3. ՈԱԱԿ-ի շահակիցների ներգրավվածության բարձրացում ՈԱԱԿ-ի գործընթացներում, հաղորդակցության և համագործակցության ընդլայնում:
4. ՈԱԱԿ-ի հաշվետվողականության և թափանցիկության բարելավում:
5. PR քաղաքականության բարելավում:
6. ՈԱԱԿ-ի գործունեության տեսանելիության բարձրացում ազգային և միջազգային հարթակներում:

<u>Գնահատման ցուցիչները</u>

1. ՈԱԱԿ-ի շահակիցների՝ հանդիպումների և միջոցառումների մասնակցության արդյունավետությունը հավաստող գնահատականներ:
2. ՈԱԱԿ-ում վերապատրաստում անցած ՄՈՒՀ-երի աշխատակիցների բավարարվածությունը հավաստող գնահատականներ :
3. ՈԱԱԿ-ում վերապատրաստումների ընթացքում ՄՈՒՀ-երի աշխատակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների և հմտությունների կիրառելիության արձանագրում:
4. ՈԱԱԿ-ում կազմակերպվող վերապատրաստումներից փորձագետների բավարարվածությունը հավաստող գնահատականներ, ՈԱԱԿ-ի համակարգողների կողմից վերապատրաստում անցած և հավատարմագրման գործընթացներում ներառված փորձագետներից բավարարվածության գնահատականներ:
5. Շահակիցներին ՈԱԱԿ-ի գործընթացների վերաբերյալ տրամադրված տեղեկատվության և խորհրդատվության կիրառելության արձանագրումներ:
6. ՈԱԱԿ-ի գործունեության՝ պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, տեղական մեդիահարթակներում պատշաճ և պարբերական ներկայացվածություն:

7. ՈԱԱԿ-ի գործունեությունից շահակիցների տեղեկացվածության բավարարության գնահատականներ:
8. ՈԱԱԿ շահակիցների, հետևորդների (followers), բաժանորդագրությունների (subscribers) թվի աճ:
9. Շահակիցների հետ հետադարձ կապի ակտիվացում:

<u>Գործողությունների նկարագրություն</u>

1. ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստումների կազմակերպում:
2. Ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնավերլուծություն իրականացնելու ուղղությամբ ՄՈՒՀ-ի աշխատակիցների համար վերապատրաստումների կազմակերպում:
3. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների համար փորձագետների շարունակական վերապատրաստումների իրականացում՝ միտված ՈԱԱԿ-ի փորձագետների բազայի համալրմանը:
4. Ընդլայնել ոլորտային ՄՈՒՀ-երի և գործատուների հետ համագործակցությունը:
5. ՈԱԱԿ-ի շահակիցներին որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում:
6. Ապահովել ՈԱԱԿ-ի շահակիցների տարբեր խմբերի միջև արդյունավետ հաղորդակցությունն ու թափանցիկ գործելաոճը, սոցիալական տարբեր հարթակներում շահակիցների հետ կապի ամրապնդմանն ու ընդլայնմանը նպաստող ակտիվ էջերի գործարկում:
7. Մասնագիտական կրթական համակարգի մասին վստահելի տեղեկատվության հավաքագրում և տարածում:
8. Մասնագիտական ոլորտում հայրենական և միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածման, մասնագիտական կրթության նորարարության խրախուսմանը միտված տեղեկատվության տրամադրում:
9. Ապահովել կայքի բովանդակությունը և հրապարակվող փաստաթղթերի ու տեղեկատվության համապատասխան ժամկետները՝ համաձայն ՈԱԱԿ-ի կանոնադրության, Փորձաքննության անցկացման ձեռնարկի, Հավատարմագրման կարգի, Գրանցամատյանի վարման կարգի և այլ փաստաթղթերի:
10. Սոցիալական ցանցերում բացահայտել թիրախային լսարանները, շարունակաբար ընդլայնել ՈԱԱԿ-ի ներկայությունը սոցիալական ցանցերում, ներգրավել նոր հետևորդների և դառնալ առավել հասանելի բոլոր շահակիցների համար:
11. Պահել և ընդլայնել գործնական կապերը լրագրողների հետ՝ պարբերաբար տեղեկացնելով ընթացող գործընթացների մասին և տրամադրելով նյութեր՝ մամուլի հաղորդագրություններ, նկարներ, տեսահոլովակներ, տարածել հաղորդագրություններ ընթացիկ և սպասվող իրադարձությունների վերաբերյալ:

<u>Գնահատում</u>

1. Պրոտոկոլի վերլուծություն:
2. ՈԱԱԿ ներքին միջավայրի և ընթացիկ գործընթացների և խնդիրների վերլուծություն /Հարցաշարերի միջոցով/:
3. Հարցաշարերի միջոցով շահակիցների բավարարվածության գնահատում:
4. Քննարկումներ շահակիցների հետ, հետադարձ կապի արդյունքներ:
5. Հարցաշարերի միջոցով ՄՈՒՀ-երի աշխատակիցների, փորձագետների վերապատրաստումների արդյունավետության գնահատումներ:
6. Տրամադրված խորհրդատվությունների արդյունավետության գնահատում /հարցաշարերի, քննարկումների միջոցով/:

7. Տարեկան կտրվածքով ֆեյսբուքյան հարցման արդյունքներ /շահակիցների կողմից գնահատել կայքի կառուցվածքն ու բովանդակությունը, մատչելիությունը, հանդես գալ նոր առաջարկներով/: 8. ՈԱԱԿ-ի ֆեյսբուքյան էջի և Google analytics-ի տվյալների վերլուծություն /տարին առնվազն երկու անգամ/: 9. Մեդիա մոնիտորինգ և արդյունքների վերլուծություն:
<u>Պատասխանատվություն</u> Հասարակության հետ կապերի պատասխանատու
<u>Հաշվետվություն</u> Տարեկան հաշվետվություն և թեմատիկ վերլուծություն
Բարելավում Դիտարկել իրականացված վերլուծությունների, գնահատումների արդյունքները և դրանք ներառել տիրույթի շրջանակում իրականացվող գործընթացների շարունակական բարելավման մեջ:
<u>Տիրույթը կարգավորող փաստաթղթեր</u> • ՈԱԱԿ կանոնադրություն • ՈԱԱԿ Ռազմավարական ծրագիր 2021-2025

Հաստատված՝
18.10.2021թ.
ՈԱԱԿ տնօրեն
Ռուբեն Թոփչյան